



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

----- 2017 թվականի N°---Ա
քաղ. Երևան

**«ՅՈՒՔՈՍ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N°01/11.1/17679-17 ու «ՅՈՒՔՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 2421 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ՝

1) Ընկերության մասնակիցներ «ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, Արամ Խաչատրյանի, Հայկ Եսայանի և Ալեքսանդր Եսայանի բաժնեմասերից օտարելու Հայաստան Հանրապետության քաղաքացիներ Գուրգեն Խաչատրյանին և Արտյոմ Խաչատրյանին՝ հետևյալ հարաբերակցությամբ.

ա. «ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ 23.7442172407890 տոկոս,

բ. Արամ Խաչատրյան՝ 34.3111402162158 տոկոս,

գ. Հայկ Եսայան՝ 4.1865402034413 տոկոս,

դ. Ալեքսանդր Եսայան՝ 4.1865402034413 տոկոս,

ե. Գուրգեն Խաչատրյան՝ 16.7857810680563 տոկոս,

զ. Արտյոմ Խաչատրյան՝ 16.7857810680563 տոկոս.

2) «ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներդրում կատարելու ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում Ընկերության բաժնեմասերի հետևյալ հարաբերակցությանը.

ա. «ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ 34.9701542966550 տոկոս,

բ. Արամ Խաչատրյան՝ 29.2600518076360 տոկոս,

գ. Հայկ Եսայան՝ 3.5702218718324 տոկոս,

դ. Ալեքսանդր Եսայան՝ 3.5702218718324 տոկոս,

ե. Գուրգեն Խաչատրյան՝ 14.3146750760221 տոկոս,

զ. Արտյոմ Խաչատրյան՝ 14.3146750760221 տոկոս.

3) կանոնադրական կապիտալի ավելացման ճանապարհով Ընկերության նոր մասնակցի՝ «ՖՈՐԱ ԲԱՆԿ» բաժնետիրական առևտրային բանկի ընդգրկման արդյունքում Ընկերության բաժնեմասերի հետևյալ հարաբերակցությանը.

ա. «ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ 31.05 տոկոս,

բ. Արամ Խաչատրյան՝ 25.98 տոկոս,

գ. Հայկ Եսայան՝ 3.17 տոկոս,

դ. Ալեքսանդր Եսայան՝ 3.17 տոկոս,

ե. Գուրգեն Խաչատրյան՝ 12.71 տոկոս,

զ. Արտյոմ Խաչատրյան՝ 12.71 տոկոս,

է. «ՖՈՐԱ ԲԱՆԿ» բաժնետիրական առևտրային բանկ՝ 11.21 տոկոս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան

----- 2017թ.

Ժամը 16:00